ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«16» 02 2024 թ.
№ ՊԵԱՌ-ԳԼ-155

«ՍՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 04243056
ՀՀ, ք. Արտաշատ, գ. Այգեզարդ,
Պռոշյան փող., տ. 34
հեռ. 094 50 68 44, 094 00 02 04
էլ. հասցեն՝ gkarenvich@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության միջև 20.01.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-10/9-10 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 27.02.2023թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՍՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությունը 2023թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 20.12.2023թ.-ը պետք է մատակարարեր 788 քմ Դռներ (Դուռ մետաղապլաստե) և 1,000 քմ Պատուհաններ (Պատուհան մետաղապլաստե), որոնց մասով Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ՍՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ի կողմից 413,912 քմ Դռներ (Դուռ մետաղապլաստե) և 148,163 քմ Պատուհաններ (Պատուհան մետաղապլաստե) ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. փետրվարի 16-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՍՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 160,414 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 19.01.2024թ. և 221,370 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 4,706,400 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 2,294,042 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. փետրվարի 23-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 4,706,400 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 2,294,042 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՍՏՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. փետրվարի 23-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ